№ 98 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29 — 1895 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29 № 98

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԵԼԵՖՈՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՏԵԼԵՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ այսօր, երեքշաբթի, օգոստոսի 29-ին, „Մշակի“ հանդուցեալ հրատարակիչ

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆԻ

թաղման քառասունքի օրը, կատարվելու է Հոգեհանդիսա, Խոջիվանքի գերեզմանատանը, հանդուցեալի գերեզմանի վրա: Սկիզբը առաւօտեան 10 ժամին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու ճանապարհ միայն կայ. Երեք պետութիւնների պատասխանը. Հայոց հարցը և եւրոպական մամուլը.—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կամախի դէպքերի տպաւորութեան տակ. Նամակ Սարիղամիշից. Նամակ Գօրիսից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ամերիկայից. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից:

ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ ՄԻԱՅՆ ԿԱՅ

—

Լորդ Սալսբիւրին, իր ամբողջ կուսակցութեան հետ միասին՝ կանգնած է երկու վտանգաւոր ճանապարհի առաջ.—կամ յետ կանգնել իր ասած խօսքերից և ծաղրի առարկայ դառնալ ամբողջ Եւրոպայում, կամ իր ասած խօսքերի տէրը լինել, և կռիւ յայտնել Թիւրքիային:

Պարլամէնտական վերջին ճառից յետոյ յարգելի լորդի համար ուրիշ ճանապարհ չէ մնում: Զը կայ այլ ևս միջին ճանապարհ, և վաղուց անցել է այն ժամանակը, երբ կարելի էր անորոշ խօսքերով ամիսներ անցկացնել:

Երեք դեսպանների արած քայլերը, վերջին ճառերը պարլամէնտում, գահական ճառի վճռական խօսքերը, հասարակաց կարծիքի դրդռված վիճակը, ամբողջ Հայաստանի լարված դրութիւնը, վերջապէս Թիւրքաց բարձր կառավարութեան անսահման ձգձգումները՝ վերջնականապէս պարզ են դնում երեք մեծ պետութիւնների, մանաւանդ Անգլիայի վրա, որը ամենից շատ աղմուկ հանեց և ամենից շատ խոստացաւ, դիմել մի կարական միջոցի լուծելու այն խնդիրը, որ ահա մի ամբողջ տարուց ի վեր զբաղեցնում է ամբողջ քաղաքական աշխարհը, թէ ովկիանոսի այս և թէ այն կողմերում:

Ոչ կոնֆերէնցիան Կ. Պոլսում, ոչ կոնդրէսը եւրոպական որ և է մայրաքաղաքում, ոչ դեսպանների որ և է նոր ծրագիր, և ոչ էլ զանազան Շաքիր-փաշաների ուղևորութիւնը Հայաստան՝ սուլթանի ֆիրմաններով չեն կարող լուծել Հայոց հարցը, որովհետև Թիւրքիան իր համար դրել է միմիայն մի նշանաբան՝ կամ հայոց հարց կամ պատերազմ:

Միմիայն երեք պետութիւնների կողմից ձեռք առած վճռական միջոցները, միմիայն ծովային ցոյցը, կամ պատերազմական նաւերի երևալը կարող են ստիպել Թիւրքիային ճանաչել արդարութիւնը, իրաւունքը, քաղաքակիրթ աշխարհի ձայնը, որ վաղուց հալածվում են ամբողջ Օսմանեան պետութեան սահմաններից:

Ուրիշ ճանապարհ չը կայ: Ուրեմն, կըրկնում ենք, անգլիական պահպանողական մինիստրութեանը, լորդ Սալսբիւրիի հետ միասին, մնում է՝ կամ խոնարհվել Թիւրքիայի խորամանկութիւնների առաջ և ծաղրի առարկայ դառնալ ամբողջ աշխարհում, կամ բարձր պահել իր խօսքը՝ և ձեռնոց դցել Թիւրքիային:

ԵՐԵՔ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

—

Երէկ, օգոստոսի 28-ին, ստացանք Լօնդօնից, արժանահաւատ աղբիւրից, մի նամակ, որը հաղորդում է մեզ հետևեալ ուշադրութեան արժանի տեղեկութիւնները: Նամակը առաջ ենք բերում նոյնութեամբ:

„Բարիզի Թիւրքիոյ դեսպան Զիա-փաշա հավը երթալով՝ ներկայացաւ հանրապետութեան նախագահ պ. Ֆօրի և խնդրեց իր միջամտութիւնը, որպէս զի հայկական խնդրին մէջ Անգլիան ետ մնայ իր պահանջումներէն: Պ. Ֆօր պատասխանեց, թէ լօրդ Սալսբիւրիի ճառէն ետքը սուլթանը պէտք է զգար, թէ ա՛լ հնար չէ ո՛ և է փոփոխութիւն պահանջել: Թէ ինքը կը յորդորէ օսմանեան դեսպանը, որ հաղորդէ Դրան, թէ ամենէն շահաւոր միջոցը Թիւրքիոյ համար ծրագրին ընդունելութիւնն է:

„Նախագահը ըսաւ նաև, թէ այսպիսի քաղաքական խնդիրներու մէջ իրեն դիմելու պէտք չի կայ, այլ արտաքին գործերու նախարարին:

„Օսմանեան դեսպանը շատ դառն տպաւորութեան ներքոյ մնաց“:

„Բեղրպուրկի օսմանեան դեսպանը, երբ իշխան Լոպանովի դիմեց, որպէս զի եւրոպական յանձնաժողովի մը պահանջումը եռանուի Անգլիոյ կողմէն, իշխանը պատասխանեց, թէ արդէն խօսք տուած էր լօրդ Սալսբիւրիի, որ իր պահանջումներուն հաւանութիւնը կուտայ, ուստի աւելորդ էր այլ ևս դիմում ընել:

„Դեսպանին բոլոր աղաչանքները անօգուտ եղան. վերջապէս իշխան Լոպանով հասկցուց, թէ ինք իր ընելիք գործը գիտէ“:

„Լօնդօնի օսմանեան դեսպանին վերջին տեսակցութիւնը Սալսբիւրիի հետ շատ դառն եղաւ: Սալսբիւրի չուզեց երկար խօսել, յայտարարելով, թէ յողնած է և չի կրնար նորէն կրկնել, ինչ որ ճառին մէջ ըսած էր: Յայտարարեց, թէ Թիւրքիա կաղ-կաղ ըլլալու վտանգին մէջն է, եթէ երեք պետութեանց առաջարկները չընդունուին:

„Դեսպանը յուզուած մեկնեցաւ Սալսբիւրիի մօտէն, և դեսպանատունէն կը հաւատան, թէ այնքան տագնապի մէջ գտնուած է Ռիւսթէմ-փաշա, որ հիւանդանալով անկողին մնած է“:

—

Այդ տեղեկութիւնները հաստատում է և „Daily News“ լրագիրը, որ տպագրել է Կ. Պոլսից, օգոստոսի 15/27-ից ստացած հետևեալ հեռագիրը.

„Սուլթանի հրամանով մի հեռագիր ուղարկվեց Պարիզի և Պետերբուրգի օսմանեան դեսպաններին՝ որի մէջ նա դառն կերպով գանգատվում է հայոց հարցի մէջ Մեծ-Բրիտանիայի բռնած դիրքի դէմ, մի դիրք, որ նկատվում է իբրև սուլթանի հեղինակութիւնը նուաստացնող: Սուլթանը հրամայում է կոչում անել Ֆրանսիական և ռուսաց կառավարութիւններին, որպէս զի դրանք գործ դնեն իրանց բարեխօսութիւնը Մեծ-Բրիտանիայի առաջ այն նպատակով, որ նա փոխի իր այժմեան բռնած դիրքը: Ֆրանսիական և ռուսաց կառավարութիւններից ստացած պատասխանները նպաստաւոր չեն և ոչ էլ խրախուսական Թիւրքիայի համար“:

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

—

I. Կամախի աւերմունքը

«Daily News» լրագրում կարդում ենք.

«Երզնկայից եկած հեռագիրները հաստատում են, որ մեծ երկիւղ է տիրում այդտեղի հայ բնակիչների մէջ, ի նկատի ունենալով այն դիրքը, որ բռնել են Թիւրք իշխանութիւնները այն յարձակումների վերաբերմամբ, որ նորերս գործել է աւազակների մի խումբ Կամախի մօտ, Երզնկայից դէպի հարաւ-արևմուտք, մի Թիւրք գնդապետի վրա, որի ժամանակ նրա խմբին պատկանող մի տասնապետ սպանվել է:

«Իշխանութիւնները ամբաստանում են հայերին իբրև այդ ոճրի հեղինակներ, ուղարկում են մի մեծ զինուորական խումբ խուզարարք գտաւոր. խումբը յարձակվում է գիւղերի և վանքերի վրա ու գործում է այդտեղ բռնաբարութիւններ:

«Աւելացնում են, որ բնակիչները մեծ սարսափի մէջ են գտնվում և ենթարկվում են այնպիսի բռնաբարութիւնների, ինչպիսին եղաւ Սասունում, ուստի և դիմել են Կ. Պոլսի դեսպաններին՝ պաշտպանութիւն խնդրելով:

II. Ընդհանուր պահանջ

Վիէննայից, Լօնդօնի լրագիրներին հեռագրում են օգոստոսի 15/27-ից.

«Politische Correspondenz» հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում հայոց հարցի այժմեան վիճակի մասին: Անգլիական, ռուսական և ֆրանսիական կառավարութիւնները նկատողութեամբ հետևում են Սասունի դէպքերի զարգացմանը: Հայոց հարցի մասին նոր տեղեկութիւններ չունենալով՝ Անգլիան ետ մնաց իր պահանջումներից: Պ. Ֆօր պատասխանեց, թէ լօրդ Սալսբիւրիի ճառէն ետքը սուլթանը պէտք է զգար, թէ ա՛լ հնար չէ ո՛ և է փոփոխութիւն պահանջել: Թէ ինքը կը յորդորէ օսմանեան դեսպանը, որ հաղորդէ Դրան, թէ ամենէն շահաւոր միջոցը Թիւրքիոյ համար ծրագրին ընդունելութիւնն է:

«Նախագահը ըսաւ նաև, թէ այսպիսի քաղաքական խնդիրներու մէջ իրեն դիմելու պէտք չի կայ, այլ արտաքին գործերու նախարարին:

«Օսմանեան դեսպանը շատ դառն տպաւորութեան ներքոյ մնաց“:

«Բեղրպուրգի օսմանեան դեսպանը, երբ իշխան Լոպանովի դիմեց, որպէս զի եւրոպական յանձնաժողովի մը պահանջումը եռանուի Անգլիոյ կողմէն, իշխանը պատասխանեց, թէ արդէն խօսք տուած էր լօրդ Սալսբիւրիի, որ իր պահանջումներուն հաւանութիւնը կուտայ, ուստի աւելորդ էր այլ ևս դիմում ընել:

«Դեսպանին բոլոր աղաչանքները անօգուտ եղան. վերջապէս իշխան Լոպանով հասկցուց, թէ ինք իր ընելիք գործը գիտէ“:

«Լօնդօնի օսմանեան դեսպանին վերջին տեսակցութիւնը Սալսբիւրիի հետ շատ դառն եղաւ: Սալսբիւրի չուզեց երկար խօսել, յայտարարելով, թէ յողնած է և չի կրնար նորէն կրկնել, ինչ որ ճառին մէջ ըսած էր: Յայտարարեց, թէ Թիւրքիա կաղ-կաղ ըլլալու վտանգին մէջն է, եթէ երեք պետութեանց առաջարկները չընդունուին:

«Դեսպանը յուզուած մեկնեցաւ Սալսբիւրիի մօտէն, և դեսպանատունէն կը հաւատան, թէ այնքան տագնապի մէջ գտնուած է Ռիւսթէմ-փաշա, որ հիւանդանալով անկողին մնած է“:

—

Այդ տեղեկութիւնները հաստատում է և „Daily News“ լրագիրը, որ տպագրել է Կ. Պոլսից, օգոստոսի 15/27-ից ստացած հետևեալ հեռագիրը.

«Սուլթանի հրամանով մի հեռագիր ուղարկվեց Պարիզի և Պետերբուրգի օսմանեան դեսպաններին՝ որի մէջ նա դառն կերպով գանգատվում է հայոց հարցի մէջ Մեծ-Բրիտանիայի բռնած դիրքի դէմ, մի դիրք, որ նկատվում է իբրև սուլթանի հեղինակութիւնը նուաստացնող: Սուլթանը հրամայում է կոչում անել Ֆրանսիական և ռուսաց կառավարութիւններին, որպէս զի դրանք գործ դնեն իրանց բարեխօսութիւնը Մեծ-Բրիտանիայի առաջ այն նպատակով, որ նա փոխի իր այժմեան բռնած դիրքը: Ֆրանսիական և ռուսաց կառավարութիւններից ստացած պատասխանները նպաստաւոր չեն և ոչ էլ խրախուսական Թիւրքիայի համար“:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

—

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, օգոստոսի 19-ին

Մէկ երկու օր է Ելոզի պալատին մէջ տիրած իրարանցումը արտակարգ է: Սոլզպէրիի ճառէն յետոյ հետզհետէ հասած լուրերը ո՛ և է յոյսի տեղի չեն թողուր Թուրքերուն: Հինգշաբթի օր բոլոր նախարարները հաւաքուեցան Մեծ-Եպարքոսին տունը: Այս տեսակ գումարումներ մեծ և կարևոր դէպքերու առթիւ կը պատահին: Հոս հիմա տարածուած է այն լուրը, թէ յառաջիկայ շաբթուան մէջ կարևոր որոշումներ հրապարակ պիտի ելլեն:

Դուռը խաղցնելու քաղաքականութենէն վընասէ զատ օգուտ մը չը տեսաւ: Անհաւասիկ մէկ օրինակ մը: Գիտենք թէ Ծրագրին մէջ յօդուած մը կայ, թէ Պոլիս Ցանձնաժողով մը պիտի կազմուի եօթը անդամէ, չորսը իսլամ՝ երեքը քրիստոնեայ: Այդ յանձնաժողովը պիտի քննէ պատրիարքարաններու խնդիրները, բարեկարգութեանց գործադրութիւնը. Ծրագրին մէջ երեք քրիստոնեայ ըսուած ըլլալով կը կարծուէր, թէ օսմանեան հպատակներ պիտի ըլլան ատոնք. և ահա հիմա Սոլզպէրի ծանուց, թէ այդ երեք ներկայացուցիչները եւրոպացի պէտք է ըլլան, մէկը անգլիացի, մէկը ռուս, միւսն ալ ֆրանսացի: Դիւրին է մակաբերել Դրան մոլեգնութիւնը. բայց անգլիական դեսպանատունը կը պատասխանէ, թէ Պերլինի դաշնագրին 61-րդ յօդուածին բնական հետևանքն է հայոց գործերուն համար եւրոպական հսկողութեան մը հաստատութիւնը: Ո՞չ ապաքէն հայկական բարենորոգումները եւրոպական հսկողութեան ներքև են Պերլինի դաշնագրով:

Թիւրք կառավարութիւնը յուսահատած դիմեց Ֆրանսայի դեսպանին, և պատասխան ստացաւ, թէ Ռուսիա անկեղծօրէն և ջերմապէս Անգլիոյ յարած է հայկական խնդրին համար, հետևաբար Թիւրքիա ո և է տեղէ յոյս պէտք չէ ունենայ: Այս յայտարարութեան վրայ, Թիւրք կառավարութիւնը դիմեց Գերմանիոյ և Աւստրիոյ դեսպաններուն, որոնցմէ պատասխան ստացաւ, թէ իրենք թէև չեզոք են, սակայն համամիտ են երեք պետութեանց պահանջումներուն և կը կարծեն, որ Թիւրքիոյ շահը կը պահանջէ Ծրագիրը անմիջապէս ընդունել:

Հիմա խնդիրը այս վիճակին մէջ է: Սուլթանին վերջնական որոշման մասին դեռ յայտնի բան մը չի գիտցուիր. բայց կրնանք ենթադրել, թէ հեռագիրը այս նամակէն առաջ թերևս ձեղի կարևոր լուրեր հաղորդէ:

Հեռագիր կամ նամակներ թերևս ձեղի հաղորդեն Իզմիրլեան պատրիարքի հրաժարականին նկատմամբ զրոյցներ, որոնց սակայն հաւատք մի ընծայէք: Քանի մը խորհուրդներու իբր հետևանք սխալ լուրեր տարածուեցան հոս, դեսպանական և կառավարական շրջանակներուն մէջ: Եղելութեան ճշմարիտը հրապարակաւ գրելու հարկ չեմ տեսներ. կը հաղորդեմ խմբագրութեան, այդքանը կը բաւէ. մօտիկ բարեկամներ կրնան իմանալ:

—

Շաքիր-փաշա Սև ծովի նաւահանգիստները հանդիպելով կերթայ Տրապիզոն: Երեք դեսպանները ծանուցին Դրան, թէ Շաքիրը չեն համարիր իբր բարձրագոյն կոմիսար:

Սասունի հոգեհանգստին առթիւ տրուած քարոզները հոս վերին աստիճանի յանդուգն կը համարուին: Քանի մը եկեղեցականներ ծայրայեղ լեզուով խօսած են օսմանեան կառավարութեան դէմ:

Յիշեցնեմ, որ հռոմէական-հայերն ալ անտարբեր չի մնացին, և նոյն օրը եկեղեցիի մը մէջ յատկապէս պատարագ մատուցուեցաւ և պաշտօն կատարուեցաւ ի յիշատակ Սասունի կոտորելոց: Աշխարհական տարրը, Աղարեանի քթին տակ, այս եղբայրակցական ցոյցը ըրաւ:

Եղբայրակցական ուրիշ ցոյց մըն ալ Կէտիկ-փաշայի կողմերը: Բողոքական հայերը երկար ժամանակէ ի վեր դիմում կընէին կառավարութեան, այդ թաղին մէջ իրենց փլած ժողովարանը վերաշինելու համար. կառավարութիւնը միշտ կը յետաձգէր շինութեան հրամանը, այլ և այլ պատճառներ մէջ բերելով: Վերջերս բողոքական հայերը յուսահատած կերևէին ժողովարանին վերաշինութենէն: Անցեալ շաբթու լուսաւորչական հայ երիտասարդներու խումբ մը, ըէվոլվէրներով զինուած, գիշերով կերթան բողոքականներու հետ ժողովարանին տեղը և կը հրամայեն իրենց բերած քանւորներուն, որ սկսին ժողովարանը շինել այդ գիշեր: Իրարանցում մը կը սկսի թաղին մէջ, ոստիկանութիւնը հոն կը հասնի, կուզէ արգելել շինութիւնը. հայ երիտասարդները զէնքերնին կը ցուցնեն ոստիկաններուն, որոնք չեն համարձակիր վրանին երթալ: Ժողովարանին շինութիւնը կը շարունակէ այդ գիշերը և հետևեալ օրն ալ. չէնք բաւական բարձրացած էր: Սակայն երիտասարդները երբ կը մեկնին, ոստիկանութիւնը պահապաններ կը դնէ հոն: Եթէ համարձակէին, մինչև հիմա քանդած էին չէնքը, բայց առ այժմ կը հսկեն, որ չամբողջանայ:

Ահա կրօնական ազատութիւնը՝ Ցանկաստանի մէջ:

—

Հայաստանէն Պոլիս եկած հարստահարութեանց տեղեկագիրները, եթէ ամեն օր համառօտել ուզեմ, պիտի պտրտաւորուիմ այն ատեն առտուէն

թեան չառին Բ. Դրան այն յայտարարութիւնը, թէ մարշալ Շաքիր փաշա նշանակվել է իբրև Փոքր-Ասիայի նահանգների կօմիսար։

«Երեք մեծ պետութիւնները, ի նկատի ունենալով, որ Հայաստանի բէֆօրմների համար իրանց առաջարկած ծրագիրը չընդունվեց Բ. Դռնից, և Բ. Դրան վերջին պատասխանը չէ տալիս որ և է հիմն ապագայ բանակցութիւնների համար, համաձայնվել են՝ հիմնվելով Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի վրա, պահանջել Բ. Դռնից՝ դաշնագիրը ստորագրող բոլոր պետութիւնների անունով՝ հարկաւոր բէֆօրմները մտցնել և այնտեղ վերահսկող յանձնաժողով նշանակել։ Ստորագրող պետութիւնները որոշել են իրանց մէջ այն ձևը, որով պէտք է ձեռք առնվի այդ միջոցը։»

III. Անգլիական պահպանողականները

Պետերբուրգից, օգոստոսի 26-ից, «Нов. Обозрѣніе» լրագրին հեռագրում են։

«Լօնդոնից հեռագրում են «Нов. Время» լրագրին, որ անգլիական տօրիների կուսակցութիւնը քաղաքական ինքնասպանութիւն է անում Սօլսբիւրիի պաշտպանութիւնը հայերին։ Լուրերին նայելով, Սօլսբիւրի սպառնացել է Բ. Դրան, թէ Թիւրքիան պէտք է բաժան բաժան անել։ Հաւատացնում են, որ տօրիների նոր մինիստրութիւնը, Անգլիայի պրէստիժը փրկելու համար Արևելքում, ստիպված կը լինի բռնի միջոցներ գործ դնել Թիւրքիայի դէմ։

IV. Տարաձայնութեան նշաններ

Անգլիական պահպանողական «Pall Mall Gazette» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է.

«Բ. Դուռը համոզված է, որ Ռուսաստանը և Ֆրանսիան չեն ցանկանում լուրջ միջոցներ ձեռք առնել հայոց հարցը լուծելու համար։ Լօնդոնի ֆրանսիական դեսպանատան մէջ ուղղակի ասում են, որ Ֆրանսիան նախ և առաջ կամենում է եգիպտական հարցը կարգադրել, և ապա արդէն լուրջ կերպով ձեռք տալ հայոց հարցին։ Ֆրանսիական դիպլօմատիան իբր թէ աշխատում է միայնակ Անգլիայի վզին փաթաթել հայոց հարցի ամբողջ ծանրութիւնը։

«Բ. Դուռը նոյնպէս կարծում է, որ Աւստրիան և Գերմանիան ֆրանս-ռուսական հայեացքներն ունեն հայկական գործերի մասին։

«Այդ պատճառով հայոց հարցում Անգլիան ստիպված կը լինի յոյս դնել բացառապէս իր այժերի վրա։»

«Կամենալով կատարելապէս ոչնչացնել Հայաստանի բարենորոգումների նախագիծը, սուլթանը դիմում է մի յուսահատ միջոցի։ Նա աշխատում է երկպառակութիւն գցել երեք մեծ պետութիւնների մէջ։

«Այդ նպատակով, ինչպէս հաղորդում են Բէյոերի գործակալութեանը Կ. Պոլսից, սուլթանը նորերս ուղարկեց Պետերբուրգի և Պարիզի իր դեսպաններին հեռագիրներ, որոնց մէջ դառնապէս գանգատվում է Անգլիայի բռնած դիրքի դէմ հայկական բարենորոգումների հարցում։

Անգլիայի գործունէութեան այդ եղանակը առնուանելով անարժան և իրան վարկին վնասող, սուլթանը բարեկամական օգնութիւն է խնդրում Ռուսաստանից և Ֆրանսիայից այն մտքով, որպէս զի դրանք աշխատեն համոզելու Անգլիային, որ նա փոխի իր բռնած ընթացքը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՄԱԽԻ ԴԷՊԲԵՐԻ ՏՊԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Ամբողջ տարի անցաւ Սասունի յայտնի կոտորածից, սակայն հայի դրութիւնը մաղաչափ անգամ դէպի լաւը չը փոխվեց։ Ընդհակառակն, եւրոպական քննիչների հեռանալուց յետոյ՝ հայի դրութիւնը աւելի ևս վատթարացաւ և այն՝ ինչ որ վաղուց նախագուշակում էին թիւրքաց Հայաստանը այցելող եւրոպայի թղթակիցները—մօտալուտ կոտորած—այսօր կատարված իրողութիւն է։

Այն ժամանակ՝ երբ «մեծ ծերունին» իր զօրաւոր ձայնն էր բարձրացնում յօգուտ ճնչված հայերի, այն ժամանակ՝ երբ Սօլսբիւրին իր հզօր և սպառնալից ճառով կչտամբում էր Թիւրքիային, այն ժամանակ՝ երբ Մեծ-Բրիտանիայի եկեղեցիներում Սասունի «անմեղ մեղաւորների» համար տարելիցի հոգեհանգիստն էին կատարում, այդ ժամանակ, ասում ենք, թիւրքը՝ լրբացած իր անպատիժ մնալովը և լաւ յիշելով այն դարձուածքը, թէ՝ «մինչդեռ դեսպանները կուռում են՝ մենք կարող ենք հանգիստ մնալ», դարձեալ նոր Սասուն ստեղծեց Հայաստանում, նոր կոտորած առաջացրեց այնտեղ։ Սա մի դիւական ծաղր է, սա մի հրէշային հեգնութիւն, մի յանդուգն, աներևակայելի արհամարհանք է, որ օսմանցին արտայայտում է դէպի Եւրոպան, դէպի քաղաքակիրթ մարդկութիւնը։

«Հիւանդ մարդը», նկատելով իր մօտալուտ վախճանը՝ մէկը միւսից անմիտ, մէկը միւսից հրէշաւոր քայլեր է անում։ Զը նայելով որ անհերքելի ապացոյցներով վկայված է թիւրք իշխանութեան տմարդի, բարբարոս վարմունքը դէպի հայերը, այնու ամենայնիւ, թիւրքը այսօր ի տես աշխարհի ըղկտում է անպաշտպան հային, արտաքսում է իր պապենական երկրից, գարնանը՝ ցանքի ժամանակ, քիւրդ հրոսակների միջոցով ահ ու սարսափ տարածելով՝ արգելում է հայ գիւղացուն ցանել իր արտերը և երբ գիւղացուն սովամահ լինելուց ազատելու համար հեռաւոր քրիստոնեաները կամենում են օգնութիւն հասնել, թիւրքը անամօթաբար այդ էլ է արգելում և յայտնի, համարձակ մի ամբողջ քրիստոնեայ երկիր սովամահ է անում։

Թիւրքիան մոռանում է, որ միջազգային դաշնագրերով պարտաւորութիւններ ունի ստանձնած դէպի իր քրիստոնեայ հպատակները, մոռանում է, որ իր քաղաքական գոյութիւնը դեռ ևս հանդուրժելի է եւրոպական պետութիւնների անհամերաշխութեան շնորհիւ, և հէնց այն ժամանակ, երբ մարկիզ Սօլսբիւրին իր ճառում հաւատացնում էր, թէ նորանոր կոտորածների վտանգն անցած է, ճիշդ այդ միջոցին տխրահռչակ Զէքի-փաշան, անցեալ տարվայ Սասունի կոտորածի հեղինակը, երևի նորանոր չքաւչաններ ստանալու անզուսպ տենչիցը մղված, խուժդուժ ցեղերի և անպաշտպան կանանց քաջութեամբ սպանող թիւրքաց զօրքի հետ կամախում նոր կոտորած կատարեց։ Մի ամբողջ տարի է, որ Եւրոպան քննում է Թիւրքիայի չարագործութիւնները, բարոյական խրատներ է կարդում նրա գլխին, իսկ Թիւրքիան դարձեալ իրանը չարունակում է։

Անվճռողական Եւրոպային արիւն էր հարկաւոր, այդ արիւնը առատութեամբ հոսում է արդէն անհաւասար կռւի մէջ։ Հայ-քրիստոնեան իր անտանելի կացութեան մէջ տակալով այնպիսի տանջանքների, որոնց առաջ նսեմանում են քրիստոնէութեան նախկին դարերի հալածված քրիստոնեաների տանջանքները, արիւնաքամ լինելով, ուժասպառ դառնալով՝ իր աչքերը դարձրել է «լուսաւորեալ» Եւրոպային և ցանկութիւն է յայտնում «մարդկօրէն» ապրելու։ Սակայն ամեն ինչ ունի իր սահմանը։ Թիւրքիայի նոր խժդժութիւնը, վստահ ենք, սարսափի աղաղակ կը յարուցանէ քաղաքակիրթ մարդկութեան շրջանում, և հասարակական կարծիքի զօրեղ ազդեցութեան առաջ տեղի կը տան քաղաքական միտումները, և մի կենսունակ ազգի արդար պահանջները կը կատարվեն, մի ազգի, որի միակ յանցանքը ապրել կամենալն է։

Խ. Մառանկղեանց

ՆԱՄԱԿ ՍԱՐԻՂԱՄԻՇԻՑ

Օգոստոսի 17-ին

Թիւրքաց սահմանից այստեղ եկած գաղթականները չատ տխուր գոյներով են նկարագրում Հայաստանի անտանելի վիճակը։ Նրանց պատմածները լցնում են մարդուս սիրտը անսահման վշտով և տրտմութեամբ։

Գաղթականները ուզում են վերադառնալ հայրենիք, բայց թիւրքաց կառավարութիւնը արգելում է նրանց, ասելով՝ «դուք յեղափոխականներ էք, դուք լրտեսներ էք»։

Խեղճ մշեցի երկրագործ մշակը, Կովկաս գալով, արիւն-քրտինքով մի կտոր հացի փող է վաստակում, ապա ուզում է վերադառնալ հայրենիք, հարկերը տալ, երեխայոց համար չորեր առնել, քաղցածներին կերակրել, իսկ անխիղճ թիւրքերը նրան յեղափոխական և նոյն իսկ «լրտես» են համարում... Ի՞նչ լրտես. նա ուտելու հաց չունի, ոտքը տրեխ չունի և նրան համարում են լրտես։

Թիւրքաց զինուորները, միանալով քիւրդ «համիդիէների» հետ, լցրել են ամբողջ թիւրքաց Հայաստանը։ Նրանք զետեղված են Էրզրումի, Մուշի, Խնուսի, Ալաշկերտի, Բուլանըխի և Երզնկայի հայ գիւղերում։ Սուլթանի զօրքը ոռճիկ չէ ստանում։ Ո՞ւմից ստանայ, քանի որ կառավարութեան մնդուկը դատարկ է։ Սոված զինուորները, ինչպէս քաղցած գայլեր, լցրել են հայոց գիւղերը, և գիւղացիք ստիպված են նրանց կերակրել... Լաւ է, եթէ բաւականային միայն համեստ պահանջով։ Չէ. նրանք պահանջում են հաւկիթ, իւղ, գառ, մեղր, պտուղ և միրգ, մէկ խօսքով, ինչ որ սիրտը տալիս է։ Եւ խեղճ չինականը պարտաւոր է գտնել ու բերել. հակառակ դէպքում նրան լաւ ծեծում, սուրի տակ են գցում, հայհոյում են անպատկառ կերպով և ապա մատնում կառավարութեան՝ որպէս յեղափոխական...

Աւելի անտանելի է չինական կանանց կեանքը. տղամարդը դաշտ գնալուն պէս, հայ կինը մնում է, որպէս գառն գայլերի ու գաղանների մէջ... Շատ կանայք յուսահատվելով՝ վերջ են տուել իրանց կեանքին, չը կարողանալով տանել թիւրքաց զինուորների գաղանութիւնները և բռնաբարութիւնները...

Այստեղ այս տարի մեծ զօրախաղ կը լինի։ Այսօր ամբողջ զօրքը գնաց մինչև թիւրքաց սահմանը՝ Կարաւրգան և Պարտէզ գիւղերի մօտ։ Սպասում են մօտ օրերս Կովկասի կառավարչապետին, որը պէտք է դայ այստեղ զօրքին նայելու և զօրախաղ կատարել տալու։

Շ—ի

ՆԱՄԱԿ ԳՕՐԻՍԻՑ

Օգոստոսի 20-ին

Այստեղ լուր հասաւ Էջմիածնից, որ Վեհափառ Կաթողիկոսը մտադիր է մօտ ժամանակներս Տաթև գալ և այնտեղից Գօրիսի վրայով ուղևորվել դէպի Շուշի։ Տաթևի վանքում Կաթողիկոսից հրահանգներ են ստացված։

Այստեղի գործակալը պաշտօնական հրաման ստանալով Տաթևի յաջորդից, այսօր, ամսիս 20-ին, Գօրիսի հայ հասարակութեանը ժողովի հրաւիրելով և հաղորդելով, որ Կաթողիկոսը մտադիր է այցելել Գօրիսը, խնդրեց, որ Գօրիսի հայ հասարակութեան միջից 12 հոգուց բաղկացած մի յանձնաժողով ընտրեն, Կաթողիկոսի ընդունելութեան համար պատրաստութիւններ տեսնելու։ Ժողովականները 12 հոգի ընտրեցին։ Մանաժողովը իր գործունէութիւնը կը սկսի այն օրից, երբ Կաթողիկոսի գալու մասին պաշտօնապէս հեռագիր կը լինի։

Նոր Գօրիսը սեփական եկեղեցի և դպրոցի չէնք չունի. յոյս ունենք, որ Կաթողիկոսը Գօրիսը այցելելով՝ ոչինչ կարգադրութիւն չի խնայի այդ երկու հիմնարկութիւնների գործը աջողեցնելու համար։

Հունձը վերջացել է։ Այս տարի աւելի պակաս է, քան անցեալ տարի։

Ց. Դ.

մինչև իրիկուն ուրիշ գործ չընել և կը կարծեմ թէ «Մշակի» ամբողջ չորս երեսները միշտ կը լեցուին այդ տխուր պատմութիւններով։ Գաղափար մը տալու համար, երբեմն-երբեմն մէյմէկ դէպք կը պատմեմ։ Առջի նամակով խօսեցայ Թամզարայի և Շապին-Գարահիսարի աղետալի դէպքերուն վրայ։ Այս անգամ՝ Երզնկայէն հասած լուրերը հաղորդեմ։

Ցուլիսի վերջերը Կամախի շրջակաները աւազակներու խումբ մը կը պաշարէ քանի մը ուղևորներ, որոնց մէջ են թիւրք կառավարիչը, զինուորական հրամանատարը և տասնապետ մը։ Առջի երկուքը կը կողոպտուին և վերջինն ալ կը սպաննուի։ Տեղական իշխանութիւնը օգոստոս 1-ին 200 զինուոր կը հանէ այն կողմերը, իբր թէ աւազակներ գտնելու համար. անմիջապէս կը պաշարուին Գառնի, Թաւկներ, Թորդան, Աւագ-վանք, Սեղուհի Ս. Լուսաւորիչ և ուրիշ հայաբնակ գիւղեր ու վանքեր։ Կը սկսեն ժողովուրդը ծեծել, վանականները չարչարել, իմանալու համար անունները անոնց, որոնք ամսէ մը ի վեր վանքերը ուխտի եկեր են։ Այս զօրքերուն հրամանատարն է Եավէր էֆէնդի, Սասունի մորթիչներէն մին, որ սպառնացեր է բոլոր այդ գիւղերն ալ Սասունի պէս ջարդուփշուր ընել։ Եավէր և իր զինուորներն իրենց բոլոր ուժերը թափեր են Նամանաւանդ Աւագ-վանքի և Ս. Լուսաւորիչ վանքին վրայ, զոր ամբողջապէս կողոպտեր են։ Աւագ-վանքի վանապետուհին, տիկին Մարթան, գետին կը պառկեցնեն ու կը ծեծեն. առջեւը բեղրոլ լեցնելով կը սպառնան զինքը այրել, եթէ ուխտաւորներուն անունները չըսէ։ Միանգամայն հաւկիթ խաչելով կը սպառնան անութներուն ներքև դնել։ Քանի մը հոգի սուրներով կը վիրաւորեն։ Աւագ վանքէն վանցի Ղազարը և Արիստակէս խաչատուրեանը կառնեն և լեռները մէկտեղ կը պարցնեն և յետոյ ամենալաւ տեսակէն կը գանակոծեն։ Տասը տասներկու հոգիի անուն կիմանան, ամենքն ալ անմեղ մարդիկ, և կը ձերբակալեն։ Վերը յիշուած գիւղերը բոլորն ալ ոչնչացած են։

—

Կ. Պոլիս, օգոստոսի 21-ին

Կարելի է ըսել թէ ամենէն տենդոտ օրերն են հայկական խնդրին համար։ Եւրոպական լրագիրները որ հոս կը հասնին, ակներև ցոյց կուտան թէ խնդիրը ինչ կերպարանք առած է, և որ աստիճան կարևորութիւն ստացած է։ Այստեղ, թիւրքերու շրջանակները, տխուր լռութեան մէջ են։ Իրենց շուարումը այն աստիճանի հասած է, որ կատակերգական դէպքեր ալ կը պատահին։ Ահա հատ մը։

Անցած շաբթուան մէջ Սաիդ փաշա, որ Թուրխանէն առաջ արտաքին գործերու նախարար էր, միջոց կը գտնէ սուլթանին իմացնելու, թէ ինք կարող է համոզել երեք պետութիւնները, որ հայկական խնդրին համար իրենց Ծրագիրը փոխեն։ Սուլթանը այս աւետիսը առնելով կը հրամայէ Սաիդին անմիջապէս երթալ դեսպաններուն և ըսածը ընել։ Օգոստոս 16-էն 17 լուսնալու չորեքշաբթի գիշերը, Սաիդ փաշա կէս գիշերը մէկ ժամ անցած անմիջապէս չոգեմակոյկով Վերին-Վոսփոր կերթայ երեք դեսպաններուն, որոնք կը զարմանան այս այցելութեան։ Մանաւորապէս Ռուսիոյ դեսպանը կը նեղանայ որ այսպէս տարօրինակ կերպով ուշ ատեն կը վրդովեն զինքը, վասն զի պառկած է եղեր և հարկադրուեր է ելլել։

Սաիդ փաշա իր պաշտօնը կատարելէ ետքը կը դառնայ պալատ և ուրախութեամբ կաւետէ թէ յաջողած է ձեռնարկին մէջ։ Աւետիսը կը տարածուի պալատին մէջ և յաջորդ օրը կը հասնի մինչև դեսպաններուն ականջը։ Անգլիոյ դեսպանը այս լուրը առնելով կերթայ արտաքին գործերու պաշտօնատունը և կը յայտարարէ, թէ բոլորովին սուտ է Սաիդ փաշային ըսածները. իրենք անզրդուելի կը մնան իրենց պահանջումներուն մէջ։ Կը հարցնէ նաև թէ ինչու արտաքին գործերու հրաժարած նախարար մը իրենց կը ղրկուի քաղաքական բանակցութեանց համար։ Գործը կը պարզուի այս կերպով և ուրախութիւնը կարճատև կըլլայ։

Բայց պիտի հարցնէք թէ ինչու համար Սաիդ փաշա այդ սուտը գլորեց։ Կը յուսար որ սուլթանը այս աւետիսը առնելուն պէս զինքը մէկէն ի մէկ սատրազամ կանուանէ. անգամ մը որ սատրազամ ըլլայ, ալ ետքէն կը նայի, թէ ինչպէս սուտին մէջէն ելլելու է։

Ահա թիւրքաց քաղաքականութիւնը։

—

Այս տպաւորութենց ներքև սուլթանը կատարեց իր գահակալութեան 20-րդ տարեդարձը, շաբաթ օր, օգոստոսի 19։ Անոնք որ մօտեցան սուլթանին, կը յայտարարեն թէ երբեք այսքան տխուր տեսած չէին զինքը։

Եւ ինչպէս չի տխրի, մինչ հայկական ծանր խնդիրին հետ միասին կայ նաև գանձին դատարկութիւնը։ Պետական ծառայութեան մէջ բոլոր գտնուողները կը յուսային, որ դէթ գահակալութեան տարեդարձին օրը մէյմէկ ամսական կառնեն. շատոնց է դրամի երես տեսած չունին։ Եւ սակայն այդ խնդութեան օրը իսկ սուլթանը չը կրցաւ իր պաշտօնեաներուն մէյմէկ ամսական տալ։ Ինչ որ արդեւք չեղաւ Պոլսոյ բոլոր թերթերուն—ֆրանսերէնները դլուխ ունենալով—յայտարարել գահակալութեան օրը թէ «չնորհիւ Վեհափառ Սուլթանին Թիւրքիոյ ելմտական վիճակը օրինակելի կրնայ համարուիլ բոլոր Եւրոպայի։»

Հիմա ժողովուրդը անձկութեամբ կը սպասէ կարճ ժամանակամիջոցի մէջ շատ բաներու։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Նոր-Նախիջևան, օգոստոսի 22-ին

Յօդուտ Գամառ-Քաթիպայի մահարձանի մեզ մօտ այժմ ժողովված կայ 1183 ռուբլի 40 կոպէկ (1046 ռ. 40 կ. էր.—Վեհափառ Կաթողիկոսից ստացանք 25 ռ. Նոր-Նախիջևանի փոխադարձ ընկերութիւնից 100 ռ. և Գարեգին Մարգարեանի միջնորդութեամբ 12 ռ.)։

Այսօր մեր բանաստեղծի մահվան տարեդարձի օրը, նորից դիմում եմ հայ հասարակութեանը՝ խնդրելով պատել նրա յիշատակը և շտապել ուղարկել նուէրներ։

Դարձեալ յետաձգել մահարձանի իրագործումը անկարելի է. եթէ մի տարվայ միջոցին մարմինը չը տեղափոխվի Էջմիածին, մահարձանը կը կանգնվի այստեղ, հակառակ դէպքում մահարձանը կը կանգնեցնվի Էջմիածնում։ Ինչ և իցէ, հանգանակած գումարը շատ փոքր է։

Նուէրները պիտի ուղարկել՝ Нахичевань на Дону, Г. Х. Чалхушяну.

Գր. Զալխուշեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Օգոստոսի 27-ին կովկասեան կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Շերեմետեվ վերադարձաւ Թիֆլիս իր ճանապարհորդութիւնից։ Իսկ օգոստոսի 26-ին Թիֆլիս վերադարձաւ կառավարչապետի օգնական Կոմս Ցատիչչեվը։

—

Լօնդօնի լրագիրներից իմանում ենք, որ Նուբար-փաշան նուիրել է Լօնդօնի «Հայկական ֆօնդին» 4000 ռուբլի։

—

Թէ որքան անկանոն վիճակի մէջ է հայոց դպրոցների վարչական գործը, այդ երևում է նրանից, որ մի կողմից շատ վարժապետներ և վարժուհիներ տեղ չունեն, իսկ միւս կողմից շատ դպրոցներ ուսուցիչներ են որոնում և չեն գտնում։ Դպրոցական թեմական վարչութիւնը, որ պարտաւոր է այդպիսի դէպքերում միջնորդի դեր կատարել, չէ կարողանում բաւականութիւն տալ երկու կողմերին։ Այդ տխուր երևոյթը կրկնվում է բոլոր թեմերում։

—

Օդեսայից «Новости» լրագրին հեռագրում են, որ 500 կովկասցի մահմեդականներ, որոնք չեն ցանկանում զինուորագրութեան կանոններին ենթարկվել, գաղթում են Թիւրքիա։ Թիւրքաց կառավարութիւնը տեղ յատկացրեց նրանց համար Կ. Պոլսի մօտ։

—

Մեզ մի մանաւոր նամակով գրում են Լօնդօնից, օգոստոսի 19-ից, որ այնտեղ գնացած երեք սասունցիները այժմ գտնվում են Շօալանդիայում, ուր նրանց դատը շատ մեծ համակրութիւն է գտել շօալանդացիների կողմից։

—

Ինչպէս յայտնի է, երկաթուղու մարդատար գնացքների տարիքը առաջվանից շատ էժանացրած է միայն 300 վերստից աւելի հեռաւորութիւնների համար, այն ինչ դրանից կարճ տարածութիւնների համար երկաթուղիական տարիքը համարեա նոյնն է մնում, առանց փոփոխութեան։ Ճանապարհորդներին դիւրութիւններ տալու նպատակով, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, երկաթուղիական վարչութիւնը մտադրութիւն ունի այն էժանացրած տարիքը թողնել, որ որոշված էր այս տարի ամարանոց գնացողների համար։

—

Մայրաքաղաքի լրագիրների խօսքով, ուղղակի յարաբերութիւն է հաստատվում Մոսկվայից մինչև Բօրժօմ կայարանը։

—

Այս օրերս Բագու է հասել Ֆրանսիացի կոմս Ալէքսանդր դը-Լիւր-Սալիւս, որը, «Каспій» լրագրի խօսքով, ճանապարհորդելով Կովկասում և Կրիմում նիւթեր է հաւաքում այդ տեղերը ուսումնասիրելու համար աշխարհագրական, էթնոգրաֆիական և ուրիշ կողմերից։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են օգոստոսի 19-ից. «Երէկ, կովկասեան կառավարչապետ Շերեմետեվի ներկայութեամբ, Կարսի ամրութիւնների վրա փորձեր անելու ժամանակ, թնդանօթաձիգ զինուորներից մէկը ռումբը ձեռքից պատահմամբ վայր գցեց։ Ռումբը պայթում է և վիրաւորում եօթ զինուորներ. նրանցից երկուսը մեռնում են տեղն ու տեղը, երեքը մեռան այսօր, իսկ երկուսն էլ ծանր վիրաւորված են, և ասում են, որ նոյնպէս կը մեռնեն։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

—

Պոստոն, օգոստոսի 19-ին

Հայկական խնդիրը սկսած է Ամերիկեան կառավարութեան ևս նեղութիւն պատճառել։ Թողտուր անհամար ժողովներու բողոքներն, նամակներն և անհատական խնդրագրերն, որ տարափի պէս կը տեղան նախագահին գրագրին սեղանի վրայ, այժմ միսիոնարաց դրութիւնը մեծ դժուարութիւն կառնէ Ուօշինկթնի մէջ։

Նախագահ Գլիվլընդը, որ հայ-ամերիկացի քաղաքացիներու խնդիրը այնքան անհոգ եղանակաւ լուծեց, այժմ անկարող կը զգայ նոյն կարուկ ընթացքը բռնել, զի խնդիրը ոչ թէ Ամերիկահպատակ հայերուն, այլ Եանքի ծնած միսիոնարաց կը վերաբերի։

Անուշա լսած էք Թարսուսի Սէնթ-Փօլ գօլէճին դէպքը։ Հոս այդ վարժարանին ամերիկացի պրոֆէսօրներու բարեկամներն մի այնպիսի աղմուկ յարուցին, որ կառավարութիւնը ստիպուեցաւ հրաման ղրկել, որ «Marblehead» մարտանաւը շուտով Մէրսինի նաւահանգիստը գնայ։ Մարսուանի խռովութիւնները նոր դժուարութիւն մալ կաւելցնեն, եթէ ստուգուի, թէ իրօք միսիոնարներ վիրաւորուեր են։ Միսիոնարաց բարեկամները հոս այն դասակարգին կը վերաբերին, որ ամենէն անհաշտ դէպքէն առիթ գտնելով մեծ աղմուկ կը յարուցանեն, մինչև կառավարութիւնը ձանձրացած ստիպուի որոշ քայլեր առնու, նոյն իսկ հակառակ իր կամաց։ Այս է պատճառն, որ այժմ կառավարական շրջաններու մէջ յայտնի հակակրութիւն մը կայ դէպի միսիոնարները։

Սակայն միսիոնարաց դէմ ոչ ոք այնքան զայրացած չէ, որքան ծովակալ Քըրքլէնը, որոյ Սիրիա ուղևորիլը և Հայաստանի վրա տուած ձախող տեղեկագիրը դեռ ամենս կը յիշենք։ Խեղճ նաւապետը այնպիսի փոթորիկի մը հանդիպեցաւ այստեղ, որոյ նմանը ոչ Ատլանտիքի և ոչ ալ Միջերկրականի մէջ տեսած էր. այդ էր, որ իր կատաղութիւնը չարժեց։ Այժմ նա երկրորդ հրաման մը ընդունած է կրկին մի նաւ ուղարկել Կիլիկիոյ ծովեզերը։ Այս անգամ այնքան բարկացեր է կըսեն, որ ըսեր է թէ՝ «Այս բոլոր խռովութեանց պատճառը մեր միսիոնարներն են, որք Ամերիկեան պաշտպանութեան յենլով, տեղական օրէնքները կարհամարհեն։ Ես մի միսիոնար տեսայ, որ երեք տարի Փիթսպուրկի (Ամերիկա) քանը անցուցեր էր. ընդհանրապէս խօսելով ամենն ալ այս կարգի մարդիկ են։ Զարմեր, որ ամեն չափազանցեալ և ոչ ճշմարիտ լուրի վրա մարտանաւ մը ղրկուի Արեւելք»։ Խեղճ, ծովակալ, դեռ չի գիտէ, թէ մինչև որ հայկական խնդիրը չը լուծուի, դեռ շատ մարտանաւեր պիտի երթան ու գան այդ ճամբան։

Բարեկամս մի նամակ կարդացեր է հոս Խարբերդի միսիոնարներէն գրուած, որ մեծ մտահոգութիւն կը պատճառէ Ամերիկայի Պօրտ ընկերութեան։ Այս է նամակին բովանդակութիւնը։

«Տարեկան քննութեանց վերջը, ընթացաւարտից սովորական ճառախօսութեան հանդէսէն մէկ երկու օր առաջ՝ Խարբերդու Եփրատ Գօլէճի նախագահը մի նամակ կընդունի, որ կը պահանջէ, որ այս տարի սուլթանին շնորհակալութեան ուղերձ չը կարդացուի այս հանդիսին մէջ։ Միսիոնարք խռովելով՝ ժողով կը գումարեն, կը խորհրդակցին և նկատելով, որ իրենցմէ զատ ուրիշ ոչ ոք իրաւունք ունի այդպիսի խնդրոց միջամտելու, կորոշեն չը շղթել աւանդական ընթացքէն։ Հանդիսին վերջերը բեմ կը բարձրանայ ճառախօսը սուլթանի թանկագին կենաց համար մաղթանքներ կարդալու. յանկարծ մի ահագին սուլում կընդհատէ ճառը. սուլումներուն կը յաջորդեն աղգային երգի մը երկու համարներն, զոր կերգեն ուսանողք և հանդիսականք մեծ ոգևորութեամբ։ Երգէն վերջ կը լսուին «Կեցցէ Հայաստան» աղաղակներն։ Ներկայ գտնուող Թուրք պաշտօնեաներն և միսիոնարք սարսափահար կը լինին, կը խռովի հանդէսը, ճառախօսը կը լռէ, կը վերջանայ ամեն ինչ։ Այժմ կառավարութիւնը, կըսեն, քննութիւն բացած է յանցաւորները բռնելու»։

Այնքան անակնկալ է այս լուրը, որ եթէ միսիոնարները գրած չը լինէին, ոչ ոք պիտի հաւատար, բայց այժմ ստոյգ է, թէ իրականութիւն է։ Հետաքրքրական է դիտել, թէ ասոր ինչ պիտի ըսեն մեր առաքեալները, ինչ պատասխան պիտի տան կեսարին։ Այդ նոյն դպրոցին նախագահը այստեղ մի կրօնական թերթի մէջ հրատարակած յօդուածով երկու ամիս առաջ կըսէր, թէ այս տարի մեր դպրոցներու կրօնական վիճակը շատ լաւ է, հոգևոր օրհնութիւններ կը վայելենք, աշակերտներէն շատերը կը պատրաստուին Տէրոջը այգիին մէջ գործելու և այլն և այլն։ Այժմ հարցնելու է մեր պատուելիին, թէ ինչ կը նշանակեն այդ քաղաքական ձգտումները, խլրտումները, ուր են «Տէրոջը մշակները». ինչ գործ ունեն այդ ստահակները այդ սուրբ չէնքին մէջ...

Արմէն

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՅԻՑ

—

Էրզրում, օգոստոսի 1-ին

Նախորդ յօդուածով փորձեցի վեր հանել քաղաքիս առաջնորդ Շիշմանեան եպիսկոպոսի անցեալ և ներկայ կեանքի պատկերը, զգուշանալով սակայն մաղձի աղդեցութեան տակ գրելէ։ Այդ պատկերը որչափ ալ թոյլ գոյներով ներկայացուած էր, բայց և այնպէս ունեցաւ իր աղդեցութիւնը Շիշմանեանի չիղերուն վրա։ Ուստի այժմ թէ սրբազանը և թէ իր կուսակիցները չափազանց գրգռուած՝ կաչխատեն գտնել յօդուածագիրը, անշուշտ ցած վրէժխնդրութեան մը դիտումով։ Ասիկա շատ բնական կը գտնեմ. ի հարկէ, ուրիշ կերպ չէին կարող վարուել, քանի որ բացարձակ ճշմարտութիւն մը հերքել կարելի չէ։

Արդարև կը խոստովանիմ Շիշմանեանի ներկայ մի քանի ազգասիրական գործերը, սակայն ատոնք փաստ չեն հերքելու իր մասին ըսածներս, որովհետև չեն երաշխաւորեր անոր անկեղծ ազգասիրութիւնը, քանի որ զայն ո և է գործի մղող զսպանակը եղեր են միշտ իր փառասիրութիւնը և շահը, ինչպէս արդէն բացատրած եմ նախորդ յօդուածով. ուրեմն այսպիսի ազգասէրի մը մէջ մի օր կարելի է տեսնել ազգատեաց մը. և չեն կարող մոռցնել տալ անոր տխրահռչակ գործերը, օրինակի համար, Կորիւն վարդապետի մը գոյութիւնը։

Հաճի Համազասպը արդէն ծանօթ էր թէ Տաճկաստանի և թէ Ռուսաստանի իր քսմնելի արարքներով, ուստի ժողովուրդը զայն կղերականութեան արժան չը դատելէ զատ, հակառակ պարագայ մը սրբազղծութիւն իսկ կը համարէր։ Սակայն Շիշմանեան օգտուելով հանգամանքներէն, չուզեց յարդել ժողովրդեան կամքը և՝ հակառակ սահմանադրութեան օրէնքին, հաճի Համազասպը ձեռնադրեց վարդապետ՝ Կորիւն անունով։

Կորիւն վարդապետ այս նոր ոքեմին և անուան տակ իսկ թոյլ չը տուաւ որ մոռացուի հաճի Համազասպը, շարունակելով իր եպերելի գործերը, որով և ոյժ տուաւ այն գաղափարին, որով կը դատապարտուի մեր կղերներուն մեծագոյն մասը։ Երեք տարիէ ի վեր վանահայր է Ս. Աստուածածնի վանքին, իր ձեռքն է և ելումուտքը, զոր ըստ հաճոյս կընէր և կը գործածէր, ցարդ հաշիւ պահանջուած չէր իրմէ։ Անցեալ օրերը նորընտիր վանական-խորհուրդը կը պահանջէ այդ հաշիւը։ Վարդապետին խիստ ծանր կը թուի այս բանը. թէպէտ և ինչ-ինչ առարկութիւնէ վերջ՝ կը զիջանի համակերպիլ, սակայն այս համարառութենէն առաջ գալիք անպատշաճ հետևանքէն ազատուելու համար կը փորձէ լարել ժողովուրդը վանական-խորհրդին դէմ և այս բանին համար կը դիմէ ուխտաւորներուն կրօնական զգացումին։ Սակայն ուխտաւորները լաւ կը հասկնան այս կեղծաւորութիւն բուրող խօսքերուն արժէքը և քմծիծաղ մը միայն կունենան։

Վարդապետին զեղծումներուն և ըստ կասը ըրած մատակարարութեան դէմ թէպէտ և ուղղամիտ ազգայիններ քանիցս բողոքած են, բայց անլսելի մնացած է իրենց ձայնը։ Սակայն կը յուսանք թէ ալ վերջ կը դրուի այդ զեղծումներուն ի շնորհս արդի վարչական ժողովին և վանական-խորհրդին աշխուրջ քննութեան և արդար տնօրինութեան։

Անցեալ օր քաղաքիս գաւառական ընդհանուր ժողովը նիստ մը ունեցաւ, նախագահութեամբ սրբազան առաջնորդին։ Օրակարգն էր «ընտրութիւն կրօնական ժողովոյ և դաղարելի երեսփոխանք»։ Ժողովը կարճ վիճաբանութենէ վերջ՝ տուաւ իր որոշումը օրակարգի մասին։ Ժողովին ուշադրութեան առարկայ եղաւ նաև նորընտիր վարչութեան ատենապետին, Յակոբ էֆ. Համամջեանի հրաժարականը, որ աւելի ամբաստանագիր մըն էր իր ընկերակիցներուն նկատմամբ։

Մէկ քանի երիտասարդ երեսփոխաններ, որոնք իրենց ողջմտութեամբը կը վայելեն ժողովրդեան համակրանքը, առաջարկեցին ընդունել հրաժարականը, ըսելով թէ, նորա հրաժարելովը ժողովը չի զրկուիր կարևոր այժէ մը և չէ կարելի անձի մը քմահաճոյքին զոհել մի քանի գործօն ժողովականներ։ Սակայն անոնց արդար ձայնը խղդուեցաւ աղմուկաւոր էֆէնտիներէն, որոնք գիւղացի երեսփոխաններով մեծամասնութիւն կազմեցին։

Այսպիսի զեղծումներ յաճախ կը պատահին երեսփոխանական ժողովին մէջ, որովհետև գիւղացի երեսփոխանները «մարապա»ներ են այդ վայելուչ էֆէնդիներուն, և ի նկատի ունենալով իրենց շահը՝ միշտ անոնց յայտնած կարծիքներուն արձագանքը կըլլան ու այսպէս կը խղդեն արդարութեան ձայնը։ Այս ամեն զեղծումներուն պատասխանատուութիւնը կը ծանրանայ աւելի ժողովրդեան վրա, քանի որ նա այսպիսի կարևոր ժողովի մը ընտրութեան ժամանակ կամ անտարբեր կը գտնուի և կամ անգիտակցաբար գործիք կըլլայ այս ու այն խաբեբային ձեռքը։ Երբ ժողովուրդը գիտակից պիտի ըլլայ թէ իր իրաւունքին և թէ պարտքին։

Դաշնակ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Էնզէլի, օգոստոսի 13-ին

Շտապում ենք արձանագրել մի ուրախալի դէպք, որ տեղի ունեցաւ այստեղ, ուր փոքրաթիւ հայ հասարակութիւնը զուրկ է որ և է կրթական հաստատութիւնից։

Դեռ երկու տարի սրանից առաջ մի քանի մարդոց մէջ միտք էր յղացել հաստատել միդասեան երկսեռ դպրոց։ Այս տարի այդ հարցը նորից զարթեց և, չնորհիւ մի քանի եռանդուն անձանց, յոյս կայ, որ իրագործվի։ Անցեալներում եղած մի քանի ժողովները գտնէ մեզ այդ յոյսը տուեցին։

Թէև Աստրախանաբնակ հանգուցեալ Էլիանոզեանը խոստացել էր կառուցանել դպրոցը իր ծախքով,—նոյնը խոստացաւ անցեալ տարի և նրա որդին,—սակայն մինչև այժմ այդ խոստումը չէ իրագործվել. ուստի ժողովականները վճռեցին գործի սկիզբը դնել և գնէ այս տարի վարձով բնակարանում կառավարվել, յոյս ունենալով, որ տուած խոստումը կիրագործվի գոնէ առաջիկայ տարի։ Մինչև իսկ մտադրութիւն կայ այդ խնդրի համար պատգամաւորութիւն ուղարկել յիշեալ անձի որդու մօտ։ Թէ որչափ կաջողվի, այդ ապագան ցոյց կը տայ. մեր կարծիքը այն է՝ աւելի լաւ է, որ ժողովուրդը իր յոյսը իր վրա դնի։

Արդէն հանգանակութիւն է սկսված այդ գործի համար և չարունակվում է։ 15 օրվայ ընթացքում հանգանակվել է մօտ 200 թուման գումար։ Սեպտեմբերից սկսվելու են դասեր, որի համար նախապատրաստութիւն է տեսնվում։ Առաջին տարին միայն տղայոց բաժանմունք պիտի լինի և ապա, երբ բիւդջէտը կը մեծանայ՝ կը բացվի օրիորդաց ևս։

Ցանկանում ենք ամենայն աջողութիւն։

Ամսիս 12-ին և 13-ին մի քանի ռուսահպատակ վաճառականներ ճաշի հրաւիրեցին Ռաշտի հիւպատոսին, որը մի բարի և ազնիւ բնաւորութեան տէր անձնաւորութիւն է։ Ճաշի ժամանակ հիւպատոսը խօսեց սիրոյ և համերաշխ գործունէութեան մասին, առանց խորութիւն դնելու դաւանութիւնների և ազգութիւնների մէջ։ Ասեց նաև մի քանի համակրական խօսքեր հայոց հարցի վերաբերմամբ։

Գ

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԿԱԶԱՆ, 26 օգոստոսի: Օգոստոսի 25-ին ժամանեց հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը և շարունակեց ճանապարհը դէպի Սամարա:

ՊԱՐԻԶ, 26 օգոստոսի: Ռոտշիլդ եղբայրների բանկային տան սանդուղքի վրա բռնեցին մի մարդու, որը փորձում էր պայթող գործիքի պատրոյգը վառել: Երբ որ նրան բռնեցին, նա իր ամբողջ ոյժով գցեց գործիքը, բայց պայթիւն տեղի չունեցաւ: Չարագործը խոստովանեց, որ ինքն անարխիստ է և յայտնեց, որ գործիքը ինքն է պատրաստել: Նա կամենում էր վառել պատրոյգը ծխախոտով, բայց մոխիրը արգելք եղաւ: Պայթիւնով նա միայն կամենում էր բողոք յայտնել բանկիրների դէմ: Քննութիւն է կատարվում:

ՎԻԷՆՆԱ, 26 օգոստոսի: Կ. Պոլսից հաղորդում են, որ բուլղարական էկզարխը ունկնդրութեան ընդունվեց սուլթանի մոտ և տեսակցութիւն ունեցաւ մեծ վէզիրի հետ: Թէպէտ և էկզարխը չը կարողացաւ համաձայնութիւն առնել բուլղարական նոր եպիսկոպոսներ նշանակելու համար Մակեդոնիայում, բայց սուլթանը և մեծ վէզիրը հակառակ չէին միջնորդութեանը:

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 26 օգոստոսի: Վախճանվեց Էրցհերցոգ Լադիսլավ, որը պատահմամբ վիրաւորեց իրան որսի ժամանակ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 օգոստոսի: Գուլլում, Անգլիայում, խոլերայի դէպք եղաւ:

«Нов. Время» լրագրի հեռագիրը Վլադիվոստոկից, օգոստոսի 25-ից. «Խոլերան սարսափելի չափերի հասաւ Չինաստանում: Պէկինում օրեկան մեռնում են 2000 հոգի, Շանխայում—մոտ 500 մարդիկ:

ՊԱՐԻԶ, 27 օգոստոսի: Հանրապետութեան նախագահը երէկ ընդունեց Լոնդոնի լորդ-մէրին, որը Սիտիի կողմից հրաւիրեց նախագահին Լոնդոն: Ֆօր շնորհակալութիւն յայտնեց, բայց ասեց որ Անգլիա գնալու հարցը դեռ ևս չէ յարուցված և չէ կարող նախագահի և լորդ-մէրի քննութեան առարկայ լինել: Երեկոյեան Ֆօր, զինուորական մինիստրի հետ միասին, ճանապարհ ընկաւ դէպի Լանգր, ուր լինելու է զօրահանդէս:

ՎԻԷՆՆԱ, 27 օգոստոսի: Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ, խոլերայով հիւանդացան՝ Բրոդի շրջանում 1, Բօգատինի շրջանում—4, որոնցից երեքը մեռան:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

ԹԻՖԼԻՍ. «Արձագանքի» խմբագիր Աբգար Յովհաննիսեանին: Աւելորդ չենք համարում մի անգամ էլ յիշեցնել ձեզ, որ գրական գողութիւնը դէմ է գրական ազնիւ բարքերին: Դուք, պարոն, արտատպել էք «Մշակի» №№ 95 և 96-ից Կամախի դէպքերին վերաբերեալ երկու դօկումենտ, մէկը Կ. Պօլսի պատրիարքին ուղղած, միւսը Երզնկայի առաջնորդական փոխանորդին, և հաւատացնում էք ձեր թերթի № 97-ի մէջ, որ դա ստացել էք Էրզրումից: Դուք կեղծում էք:

Բացի դրանից արտատպելով «Մշակից» այդ երկու դօկումենտը, յայտնում էք, որ դրանք «իսկական պատճէններն են և անփոփոխ»: Թոյլ տուէք ձեզ նկատել, որ դա անփոփոխ չէ: Մեր տպածի միջից մենք մի երկու կտոր հանել ենք, և մի քանի տեղ էլ փոփոխել. և որովհետև դուք արտատպել էք «Մշակից» բառ առ բառ, բնականաբար նոյն այդ կրճատումները և փոփոխութիւնները չէք նկատել, և չէիք էլ կարող նկատել:

Ուրեմն, դուք երկրորդ անգամ կեղծում էք:

Իբրև Հայաստանեայց առաքելական եկեղեցու հարազատ զաւակ, դուք, պարոն, շատ լաւ գիտէք, որ կեղծելը և սուտ խօսելը մեղք է, ուստի յոյս ունենք, որ դուք հրապարակով ներողութիւն կը խնդրէք ձեր այդ ազեղ վարմունքի համար:

ՇՈՒՇԻ. Տ. Եպ. Դուք գրում էք, որ Թաղավարդի գիւղի հայոց դպրոցի «Մշակը» ուղարկվի Գրիգոր Կարաբէգեանի անունով, բայց թէ որ քաղաքում է ապրում ինքը այդ պարոնը,—այդ չէք գրում: Շտապեցէք հաղորդել:

ԱՐՄԱՒԻՐ. Գ. Կուլիջանեան: Դուք խնդրում էք, որ «Մշակը» այժմ ուղարկվի ձեզ Արմաւիր: Բայց թէ առաջ ո՞րտեղ էիք ստանում, այդ չէք յայտնում:—Միթէ, ճշմարիտ, այդքան դժուար է յիշել, որ հասցէն փոխելիս, պէտք է հաղորդել և հին հասցէն:

ԹԻՖԼԻՍ. Աւետիս Արասխանեանին: Դուք խընդրում էք «Մշակը» այժմ ուղարկել ձեզ՝ Թիֆլիսի հասցէով, բայց թէ մինչև այժմ որտեղ էիք ըստանում, դուք այդ չէք բարեհաճում յայտնել: Մենք զարմանում ենք, որ դուք էլ, որ մօտիկ պէտք է ծանօթ լինէք խմբագրական գործին՝ իբրև խմբագիր, կրկնում էք նոյն սխալը, ինչ որ գործին անտեղեակ մեր բաժանորդներից շատերը:

Խմբագիր և հրատարակիչ՝
ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

500 Ր. ՊԱՐԳԵՒ

նրան, ով ցոյց կը տայ, թէ ուր են գտընվում օգոստոսի 23-ին ինձանից գողացված 4% ներքին փոխառութեան 5 օբլիգացիաները՝ հետևեալ №№ 123621, 134694, 168077, 123634 և 122063, իւրաքանչիւրը 1,000 ր. արժողութեամբ:

Մ. Լ. Սօսին, Անդրէեվսկայա փող. սեփական տուն: 1—1

Յանձն եմ առնում կազմել ՊԼԱՆՆԵՐ և ՆԱԽԱՀԱՇԻՒՆԵՐ, նոյնպէս և շինութիւնների կառուցումը:

Հասցէս. 1-я Гончарная ул., д. № 18.
1—3 (№ 86) Գ. ՄԵՅԷՐ

ԷՆԶԷԼԻ հայոց միգասեան նոբաբաց ուսումնարանի համար հարկաւոր է ՈՒՍՈՒՑԻՉ հայոց ու ռուսերէն լեզուի. կը ստանայ տարեկան 300 րուբլի, բնակարան, վառելիք և ծառայ: Ցանկացողները կարող են դիմել հոգաբարձութեանը այս հասցէով՝
Энзели (Персія)
Попечительству Армянскаго училища.
(№ 98) 1—3

Յայտնում եմ ի գիտութիւն թարգմանիչների որ արդէն թարգմանում եմ Потапенко ի «ГЕНЕРАЛЬСКАЯ ДОЧЬ» գրուածքը: Խնդրում եմ ուրիշները չը ձեռնարկեն: 1—1

ՕՐԲԱԶԱՐԻ հայոց ծխական ուսումնարանի համար հարկաւոր են երկու ուսուցիչ՝ մինը ձայնաւոր: Տարեկան վարձ 500 և 400 ր.:
Մեր հասցէն. Армянскъ Базаръ, Тав. губ., Попечит. Армяно-Базарск. армянскаго приходск. училища. (№ 83) 4—10

ԹԷՀՐԱՆԻ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ համար պէտք է ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ հայոց և ռուսաց լեզուների ու կար և ձևի համար:

ԹԱՒՐԻԶԻ

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ համար պէտք են ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ հայոց և ռուսաց լեզուների համար:
Երկու դպրոցների պայմանների մասին դիմել Հ. Առաքելեանին, Թիֆլիս, Բարեգործական ընկերութեան գրասենեակը, Սէրգիէվսկայա № 16.
(№ 87) 3—3

Մի փորձված ուսուցիչ, որ 17 տարի շարունակ ուսուցչութիւն է արել, պաշտօն է որոնում ծխական դպրոցներում:
Հարցնել Գօլօվինսկի պրօսպէկտի վրա, Դօվլաթեանի հագուստեղէնի մագազինում: (№ 96) 2—3

ՄՕԶԴՕԿԻ

Հայոց երկու սեռի դպրոցների համար հարկաւոր է մի հմուտ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ուսուցիչ: Բացի ձայնագրութիւնից պէտք է աւանդէ և ուրիշ առարկաներ:
Ցանկացողները թող դիմեն՝ Моздокъ, попечительству Армянскихъ училищъ.
(№ 97) 2—3

Չորրորդ կարգի ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ ցանկանում է ուսուցչի կամ ԱԻԱԳ ՈՒՍՈՒՑՉԻ պաշտօն ունենալ հայոց ծխական դպրոցներում: Կարող է աւանդել միայն լեզուները և բնագիտութիւն:
Դիմել Թեմական տեսուչ Հայր Մելքանին: (№ 86) 4—5

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ

„Կովկասեան գրավաճառանոց Զաք. Գրիգորեանցի“ հրատարակութեամբ
Լոյս տեսաւ և վաճառվում է
Ց. ՃԱՂԱՐԲԵԳԵԱՆՑԻ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
Երկրորդ տարի:
ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.
կանխիկ վճարով տասնից աւելի գնողին 24 կոպէկ: (№ 96) 2—3

ընդհանրական Թամբի տակի, ամբակի և կաշու իւղ

„ՍՊՕՐՏ“

„Ռ. ԿԷՕԼԷՐ ԵՒ ԸՆԿ.“ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
ընկերութեան գործարանի.
Ծախվում է
ԱՄԵՆ ՏԵՂ ԵՒ ԲՈԼՈՐ
նշանաւոր առևտրականների մօտ:
(№ 81) 2—2

ԱԶԴ

ՂԶԼԱՐԻ շրջանում գտնվող Ղարաջալիլ գիւղի միգասեան դպրոցի համար հարկաւոր է ՑԷՆԶ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ և ՄԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ, տարեկան ռոճիկ երկուսին միասին՝ վեց հարիւր րուբլի, բնակարան: ծառայ և վառելափայտ:
Գործակալ եկեղեցեաց՝
Ալէքսիանոս քահ. Աստուածատուրեանց
Ղզլար (№ 94) 2—6

Թիֆլիսի ս. ԳԱՅԻԱՆԵԱՆ ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱՑ ԵՐԿԴԱՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն հայ հասարակութեան, որ նորեկ աշակերտուհիների ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ կը սկսվի օգոստոսի 25-ից:
(№ 89) (Ե.) 2—4

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ երկար տարիներ պաշտօն է վարել հայոց դըպրոցներում, ցանկանում է տեղ ունենալ դասատուներում: Կարող է աւանդել միգասեան ուսումնարանի բոլոր առարկաները, բացի ռուսաց լեզուից: Հասցէն՝ Тифлисъ Цицiановская улица, домъ Парсаданова, Парсаданову. (№ 95) 2—5

ԱՐԴՎԻՆԻ

ՀԱՅ-ԿԱԹՕԼԻԿԱՑ ուսումնարանների համար հարկաւոր են՝ ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ և ԵՐԿՈՒ ՎԱՐԺՈՒՀԻ, ցենզաւորներ, ռուսաց և հայոց լեզուների: Ցանկալի է, որ լինէին ամուսիններ:
Դիմել պայմաններով՝ АРТВИНЪ, Якову Пилояну.
(№ 90) 4—6

ՑԷՆԶ ՈՒՆԵՑՈՂ

Մի երիտասարդ, որ վարել է մի քանի տարի գաւառական քաղաքներում ուսուցչի պաշտօն, ցանկանում է դասեր ունենալ: Գիտէ և հայկական ձայնագրութիւն:
Հասցէն՝ Михаилъ Сергѣевичу Шарбабчеву, Тифлисъ, Темныя ряды, собствен. д. № 2.
(№ 97) 2—5

ԱՐՄԱՒԻՐԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ

համար հարկաւոր է ԱԻԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ: Պայմաններ՝ 12 դաս, ռոճիկ 560 րուբլի, բնակարան և վառելիք: (№ 93) 3—3

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ Պ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ
ԲԱՑՎՈՒՄ Է
ԴՊՐՈՑ
Գ. Լ. ԿՈՒԻԶԱՆՈՎԻ
(Մուխրանսկայա փողոց, տուն Կօրգանօվայի, № 12, Վանքի մայր-եկեղեցու դիմաց):
Ընդունելութեան քննութիւնները սկսվում են օգոստոսի 26-ից: Պարապմունքները—սեպտեմբերի 1-ից: (№ 94) 3—3

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը յայտնում է, որ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻ օրիորդաց ծխական ուսումնարանի աշակերտուհիների ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 28-ից: (№ 95) 3—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նազօրնայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.
(Ե. Շ.) № 62 12—25

ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ս. ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ
Սօլօլակ, Սադովայա փ. № 46 (Սերգիեվսկայա փողոցի դիմաց)
Մանուկների ընդունելութիւնը (երկու սեռի) կը սկսվի օգոստոսի 22-ից, իսկ ուսումը—սեպտեմբերի 1-ից: (№ 93) 3—6

ՕՐԲԵԼԵԱՆՑԻ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՀԻՄՆՎԱԾ 1844 ԹՎԻՆ
(Թիֆլիս, Աւլաբար-Աստուածածնի հրապարակ, № 11)
Աշակերտները ընդունվում են իբրև գիշերօթիկներ, կիսագիշերօթիկներ և երթևեկ, ու պատրաստվում են բոլոր միջնակարգ ուսումնարանների համար:
Ընդունելութեան հարցաքննութիւնները սկսվել են օգոստոսի 22-ին, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ից: (№ 96) 2—4

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Августа 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.